

## Մ. Մ. ԽԱԶԱՏՐԵԱՆ

### ՄԻԶՆԱԴԱՐԻ ԶՎԱԾԻՐ ՀԱՅԵՐԵՆ ՔԱՐՏԵԶԸ

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերից մեկում (№ 1242) պահպանվել է ձվածիր տեսքի ներդիր հայերեն քարտեղ, որի աշխարհագրական բոլոր մանրամասները տրված են մակագրությունների միջոցով՝ ներկայացնելով իր ժամանակի հայտնի աշխարհը այն գիտելիքների ու աշխարհայացքի հիման վրա, որ տիրապետող էր միջին դարերի ամբողջ ժամանակաշրջանի համար: Զեռագիր այդ քարտեղը պատկերել է ամբողջ աշխարհը շրջափակված լայն գետ-ծովով, մակագրությամբ՝ «Համատարած ծովն, որ պատէ զաշխարհս այս կերպիւ է»: Քարտեղի կենտրոնում, համեմատարար խոշոր շրջանագծի մեջ թաղամասերով ու առանձին մանրամասնությամբ պատկերված է Երուսաղեմ քաղաքը, որի մակերեսը ամբողջ աշխարհը ներկայացնող քարտեղի զգալի մասն է գրավել, ծածկելով շրջակա աշխարհագրական բոլոր կարևոր այլ մանրամասները: Այդպիսի փոքր մասշտաբի քարտեղների վրա Երուսաղեմ քաղաքի մակերեսը պետք է ներկայացվեր միայն մեկ կետով, սակայն ձվածիր քարտեղի վրա Երուսաղեմը գրավել է քարտեղի ամբողջ տարածության շուրջ տասը տոկոսը: Ծովով շրջափակված ձվածիր աշխարհը հյուսիս-հարավ ուղղություն ունեցող տրամագծով բաժանված է երկու հավասար հատվածների: Քարտեղը հյուսիսի փոխարեն արևելքով վեր ուղղորդված լինելու հետեւանքով, այդ տրամագիծը ստացվել է հորիզոնական դիրքում:


Ձվածիր քարտեղի հիշյալ տրամագծի հյուսիսային հատվածը Դնեպր գետն է պատկերում, իսկ նրա երկու ափերը, մակագրության համաձայն, ներկայացնում են «ըսուզք» ժողովրդով բնակեցված տերիտորիան: Այդ տրամագծի հարավային հատվածը, որ բաժանում է Ասիան Աֆրիկայից, պետք է ենթադրել, որ

Կարմիր ծովն է. այդ տրամադից վեր քարտեղի ամբողջ կիսաշրջանը զրաված տերիտորիայի վրա մակագրված է՝ «զայս կողմս ասիա»։ Այս մասում է տրված Խորեգմը, Բաղդատը, Գամակոսը, Հնդուստանն ու Հապաշը, ինչպես նաև առկա ծովերը, թերակղիներն ու ցամարները՝ համապատասխան մակագրությամբ, առանց սահմանային եղբադերի Քարտեղի հիշլալ տրամագծի հարավային կիսաշրջանը բաժանված է բավական լայն զետ-ծովով երկու մասի, որ ըստ երեսութիւն Միջերկրական ծովն է ներկայացնում. Միջերկրական ծովում տրված են չորս կղզիներ՝ փոքր շրջաններ ներկայացնող պայմանական նշանների օգնությամբ, որոնցից մեկն ունի մակագրություն՝ «Կիպրոս»։

Քարտեղի ցածի մասում բաժանված ձախ տերիտորիայի վրա մակագրված է՝ «այս կողմս էրօպա», իսկ աշ՝ «զայս կողմս ափիկէ», եվրոպայում նշված են Պուլդարը, Ալամանը, Ֆրանկս, Սպանիա երկրները. Վենետիկը տրված է «Վենեժիա» մակագրությամբ. իսկ քաղաքներից նշված է Կոստանդնուպոլիսը. Աֆրիկայում է տեղադրված Մըսրը՝ Եգիպտոսը, իսկ քաղաքներից՝ Ալեքսանդրիան։ Սակայն քարտեղի վրա, ինչպես և ձեռագրի այլ էջերում ոչ մի հիշատակություն չկա, ինչպես քարտեղի հեղինակի, այնպես էլ նրա կազմելու ժամանակի մասին. Հայտնի է միայն, որ այդ ձեռագրին ընդօրինակված է XIV դարում մի անհայտ գրչի կողմից. Առկա փաստերից պետք է եղբահանգել, որ ձեռագրում պահպանված այդ քարտեղը ոչ թե ընագրի պատճենն է, մասշտարի պահպանությամբ, այլ ընդօրինակություն, սակայն համապատասխան փոքրացումով և զգալի բեռնաթափումով ժամանակակից մի խոշոր մասշտարի քարտեղից, որը, ըստ երեսութիւն, չի հասել մինչև մեր օրերը. Այդ եղբակացության համար հիմք է ծառայում հետեւյալը. Հայերն ձվածիր աշխարհի քարտեղի վրա երուաղեմ քաղաքի հատակագիծը անհամենատ խոշոր մասշտարի է. նա գրավել է քարտեղի զգալի մասը. Այդ նշանակում է, որ ընդօրինակողը պաշտպանել է բնագիր քարտեղի մասշտարը միայն երուաղեմ քաղաքի հատակագիծի համար, մինչդեռ երկրամասերի և այլ տերիտորիաների մանրամասությունները առավելագույն շափով փոքրացված են, որպեսզի քարտեղը օգտագործվի ձեռագրում ներդիր մեծությամբ։ Վանական քարտեղները կազմվել են առհասարակ խոշոր մեծությամբ՝ թեաթի աշխարհի քարտեղը ներկայացված է  $40 \times 50$  սմ մակերեսի վրա, Հերեֆորդի վանական քարտեղը շուրջ 1,5 մետր է, իսկ

լատիներեն մակագրություններով վանական քարտեզը 80 սմ տրամագիծ ունի:

Աշխարհի Ջվածիր քարտեզը, որ պատրաստված է ուսուցման կամ ընթացիկ պահանջների բավարարման համար, չեր կարող ձեռագրի ներդիրի ծավալն ունենալ. այդ քարտեզը համեմատարար մի խոշոր մասշտարի բնագրի ընդօրինակությունն է, որ փոքրացվելուց բացի, ըստ երևույթին, ենթարկվել է զգալի ընդհանրացման: Երկրի այն տրամագիծը, որ միացրել է արևելքարևմուտք կետերը, 10,1 սմ երկարություն ունի և քարտեզի վրա



Նկ. 1. Միջնադարի ձվածիր հայերեն քարտեզ:

ուղղարդված է վերից-վարու Երկրի մյուս տրամագիծը, որ միացնում է Հյուսիս-հարավ կետերը՝ ուղղորդված լինելով աշխց-ձախ, քարտեզի վրա հորիզոնական դիրք ունի և 9,8 սմ՝ Երկարություն Երկրի պատկերը երկու նման տրամագծերով, որոնք միմյանցից տարբերվում են երկարությամբ (մեր օրինակում 3 միլիմետր) ստացված է ձվածիր:

Ձվածիր տեսքի հայերեն մակադրություններով քարտեզի կազմելու ժամանակին ու այլ մանրամասները բացահայտելու նպատակով հարկ է ծանոթ լինել քարտեզագրական կուլտուրայի այն մակարդակին, որ միջնադարում պարտադիր է եղել այդ տիպի քարտեզների թե՛ տեսքի և թե՛ բովանդակության համար:


Քարտեզագրական դասական շրջանին հաջորդել է հայ քարտեզագրությունը, որ հանձինս «Աշխարհացոյց»-ի, պահպանել հարստացրել է քարտեզագրության, գործնական ու տեսական գիտելիքները, հասցնելով նոր բարձրության, շնորհիվ մասնագիտական բազմաթիվ ճշտումների, աշխարհագրական նոր նկարագրությունների և այնպիսի տվյալների հաղորդումով, որոնք անհայտ էին դասական շրջանի աշխատությունների ու քարտեզների համար: Հայ քարտեզագրությունից հետո արաբներն էին, որ ընդօրինակումների շնորհիվ պահպանեցին Պաղոմեոսի աշխատությունները, սակայն դրանք կրկին կյանք ստացան շատ ուշ ժամանակներում, հանդես գալով  $XV-XVI$  դարերում միայն: Հայտնի է, որ մահմեդականությունը երեք չի ընդունել երկրի գնդաձեռությունը. Կուրանը պաշտպանել է այն տեսակետը, որ «երկրագունդը տափակ մի հարթություն է, իսկ նրա վրա առկա լեռները սոսկ միջոց են երկիրը թեքվելուց պաշտպանելու՝ նրան միշտ հավասարակիռ դիրք հաղորդելու նպատակով»<sup>1</sup>: Այստեղ ընդունված է նախնադարյան այն տեսությունը, որ երկիր-ցամաքը որպես հսկա կղզի լողում է անծայրածիր ջրային տարածության վրա. ուստի Կուրանի դրույթը լեռների դերի վերաբերյալ պետք է դիտել որպես անհրաժեշտ հիմնավորում՝ ջրային այդ տարածության վրա երկրագունդը հավասարակիռ վիճակում պահելու՝ նրան թեքվելուց աղատելու համար:

Հայաստանի մասին բազմակողմանի տեղեկություններ են հաղորդել արար աշխարհագետներ ալ-հսթահրին և իրն-իսաուքալը. արար քարտեզագետները ներկայացրել են Հայաստանի առեւտրա-

<sup>1</sup> И. Ю. Крачковский, Избранные сочинения, М., том IV, стр. 20 и 44.

կան ճանապարհներն ու նրանց վրա գտնվող խոշոր բնակավայրերը:

Նկարի (2) վրա ներկայացված արաբական շրջանի Ալ-Վերդիի, ինչպես և առհասարակ արաբական քարտեզները կողմնորոշ-



#### Նկ. 2. Արաբական շրջանի ալ-վիրդիի քարտեզը

ված են հարավով գեպի վեր ու շրջափակված խոշոր գետ-օվկիանոսով. այդ քարտեզի վրա նեղոս գետը պատկերված է ուղղանկյան տեսքով ու երկարաձգված: Նույնպիսի պայմանական գծագրությամբ են ներկայացված Միջերկրական և Սև ծովերը, սակայն ընդգրկված համեմատաբար լայն հատվածով: Կղզիները ներկայացված են եռանկյան և ուղղանկյան տեսքով. թերակղզիները՝ կիսալուսաձև, առանձին երկրները տրված են սահմանա-

գծվածքով, որ մեծ մասամբ ուղիղ գծեր են և ներփակում են եռանկյան կամ քառանկյան եղբերը: Համեմատության մեջ դնելով արարական շրջանի այս քարտեզը միջնադարի հայերեն ձևածիր քարտեզի հետ, այն եղբակացությանն ենք հանդում, որ դրանք քարտեզադրական որևէ բնդհանրություն չունեն, ինչպես կողմնորոշման, այնպես էլ աշխարհամասերի պատկերման, ծովերի ու գետերի գծադրման, առանձին երկրների սահմանների ու աշխարհագրական օբյեկտների համար սահմանված պայմանական նշանների օգտագործման ասպարեզներում<sup>2</sup>: Ուստի, միջնադարի ձևածիր աշխարհի քարտեզը ոչ մի ընդհանուր գիծ չունի արարական քարտեզների համար կիրառված սկզբունքների հետ: Միակ նմանությունը այդ երկու տիպի քարտեզների այն է, որ ձևածիր հայերեն քարտեզի կենտրոնում անհամեմատ մանրամասնությամբ գծադրված է երուսաղեմ քաղաքը, իսկ արարականում՝ Երբան:

Եերկա ուսումնասիրությամբ պարզված ձևածիր տեսքի հայերեն մակադրություններով քարտեզը ոչ մի տեղեկություն չի տալիս հայերի, հայկական տերիտորիայի և նրա քաղաքների մասին. այն չունի նույնիսկ բացատրագիր, որ այն ժամանակ առհասարակ բնդիւնված էր քարտեզներ կազմելիս: Մատենադարանի ձեռագրում (որի նյութը ոչ մի կապ չունի այդ քարտեզի բովանդակության հետ) հիշատակված չեն հեղինակն ու քարտեզը կազմելու ժամանակը:

Միջնադարի քարտեզներն առհասարակ աշխարհագրական դիտելիքների արդասիթ չէին և ծառայում էին մեծ մասամբ աստվածաբանական երկերին որպես լուսաբանություն: Քարտեզների այդ յուրահատուկ տեսակը բացառապես քրիստոնեության տարածման նպատակներ էին հետապնդում. «վանական» անունը կրող այդ քարտեզների մուտքը վերացրեց գիտական ուսումնասիրությունների նվազագույն պահանջն անգամ, որովհետև դրանք ավելորդ էին նկատվում «քրիստոնեական տոպոգրաֆիայի» գաղափարների տարածման գործում: Այդ տիպի քարտեզները մեծ մասամբ կազմվում էին վանքերում, մենաստաններում, որից և առաջացավ «վանական քարտեզ» տերմինը:

Քարտեզագիտության այդ ժամանակաշրջանի զարգացման ասիմմետրիան է բնորոշում բյուզանդացի վաճառական, հետագայում

<sup>2</sup> Բնագրի փոխարեն տրված է գերմաներեն թարգմանված օրինակը:

վանական Կոնստանդիին Անտիռքացու կազմած աշխարհի քարտեղը: Քարտեղագիտության հետ ոչ մի առնչություն չունեցող այդ արտադրանքները ժամանակին հեղեղեցին ամբողջ աշխարհը և տիրապետող դարձան անգամ XVI և XVII դարերում, երբ տարածված էին ուղղանկյան ձև ունեցող և դեպի արևելք ուղղորդված քարտեղները:

Սակայն այդ քարտեղների նախատիպը համարում են կարթագենցի հսկոր Սկիլիացու (560—636) կազմած քարտեղը, որ խոր հետք թողեց հետագայում կազմված համարյա բոլոր քարտեղների տեսքի և բովանդակության վրա: Իսկորի կազմած քարտեղի, ինչպես և ձվածիր աշխարհի հայերեն քարտեղի վրա ամբողջ բնակեցված աշխարհը բաժանված է երեք մասի՝ լատինական Տ տառի տեսքն ունեցող սահմանագծով, որի հետևանքով դրանք անվանվում են տեսատեսք: Ներկայացված Ասիա, Եվրոպա և Աֆրիկա աշխարհամասերը ձվածիր աշխարհի քարտեղի վրա շրջափակված են մեկ ընդհանուր համատարած օվկիանոսով: Այդ քարտեղի վերին հատվածում ներկայացված է Ասիան: Վերջինս Եվրոպայից բաժանված է Դնեպր գետով, իսկ Աֆրիկան՝ Կարմիր ծովով:

Վանական այդ քարտեղները պարունակում էին աշխարհադրական աննշան փաստացի տվյալներ, և հեղինակները չէին աշխատում դրանք լրացնել կամ ճշտել. երկրագունդը վանական բոլոր քարտեղների վրա պատկերում էին շրջանատեսք հարթմակերպութով, ինչպես սահմանել էին եկեղեցու հայրերը: Երկրի մեծությունն ու ձեր կամ ծովերի խորությունը եկեղեցուն կարող էին հետաքրքրել միայն այն դեպքում, եթե դրանք ոնպաստում էին հավատի տարածմանը, այլապես դրանք կարող էին հեռացնել մարդու միտքը աստծո ճանապարհից: Վանական այդ քարտեղների վրա երեք աշխարհամասերը տրվում էին նկատի ունենալով ոչ թե երկրագնդի իրական ցամաքների դիրքն ու տարածումը, այլ նոյնի որդիների թիվը: Սակայն երկիրը գծագրել են վանական քարտեղների վրա երկրաշափական տարրեր պատկերացումներով: Կոնստանդին Անտիռքացին այն ներկայացնում էր որպես ուղղանկյուն, իսպանացի վանական թեաթր գծագրել էր ձվածիր, իսկ լատինական մակագրություններով քարտեղում՝ սկավառակատեսք, արաբները այն պատկերել էին շրջանատեսք, իսկ Մատենադարանի ձեռագիր հայերեն քարտեղի վրա՝ ձվածիր տեսքով, բայց համեմատաբար փոքր սեղմվածքով: Իրն-իսառւքալի 1064 թվականից վերամշակած աշխարհի քարտեղն արդեն ոչ թե կլոր է, այլ

նույնպես մեծ սեղմվածքով էլիոս է՝ ձվածիր, որ այն ժամանակ տիրապետող էր սատղարաշխական տեսության մեջ<sup>3</sup>:

Քարտեղը երկրի հաստատուն կողմերի նկատմամբ ուղղորդելու համար խոշոր նշանակություն ուներ այն հանգամանքը, թե ինչ է ցուցադրվում այդ քարտեղի կենտրոնում. աշխարհի քարտեղների վրա որպես կենտրոն միշտ պատկերվել է տվյալ ժողովրդի սրբավայրը՝ քարելացիների համար՝ Բարելոնը, հույների համար՝ Գելֆը, արարների համար՝ Մեքքան, իսկ քրիստոնեական աշխարհի վանական քարտեղների կենտրոնում ներկայացվել է Երուսաղեմը: Միջնադարի վանական քարտեղները մինչև XIV դարը ուղղորդվում էին արևելքով դեպի վեր, սակայն արևելքը հնարավոր չէր ճշգրիտ կերպով նշել, ուստի քարտեղների ուղղորդման հիմք էր ծառայում Երուսաղեմը: Քարտեղների այն ուղղորդումը, որի ժամանակ Հյուսիսը նշվում էր վերևում, սկսվել է շատ ուշ ժամանակներից՝ միայն XIV դարից, երբ ներմուծվեց պորտուգանների հետ նաև կողմնացուցը:

Վանական քարտեղների առանձնահատկություններից էր նաև այն, որ ամրող աշխարհը ներկայացնելով որպես շրջան, տրամադրով բաժանում էին երկու հավասար մասի և նրա վերին ամրող հատվածը, որ միշտ ներկայացնում էր արևելքը, հատկացնում էին Ասիային: Ցածի կիսաշրջանը դարձյալ միջնադրով երկու մասի էին բաժանում և նրա աջ կողմը՝ հատկացնում Աֆրիկային, իսկ ձախ հատվածը՝ Եվրոպային: Հայերեն ձվածիր քարտեղի վրա ևս աշխարհամասները նույն ձևով են ներկայացվել: Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն, որ Ասիան Եվրոպայից բաժանող գետի երկու կողմի տերիտորիան ցուց է տրված որպես «ըստվեր» ժողովրդի հայրենիք. ըստ երևույթին, Եվրոպայի և Ասիայի համար սահմանագիծ է ճանաչված Դնեպր գետը, որովհետև Եվրոպան Ասիայից բաժանող սահմանագիծը Դնեպրի գետաբերանում գտնվող Ազախ (ներկայում Ազով) և Ղրիմի թերակղզու Կաֆա (Թեոդոսիա) քաղաքներից շատ ավելի արևմուտք է գտնվում:

Քարտեղի վրայի մակագրությունը ուստաների բնակության տերիտորիայի սահմանի ու տեղադիրքի վերաբերյալ առաջին ակնթարթ, երբ գեռ մարդամասն չի դիտված քարտեղը, ցանկություն է առաջացնում սահման հանդիսացող այդ գետը տեղայ-

<sup>3</sup>Տե՛ս Ի. Յո. Կրաչковский, նշվ. աշխ., էջ 272:

նացնել Վոլգայի հետ. սակայն քարտեզի քննարկելի գետը թափվում է ոչ թե Կասպից, այլ Սև ծովը, ուստի Վոլգայի այդ վարկածը չի համապատասխանում իրականությանը և ընդունելի չէ: Սև ծով է թափվող գետերից է նաև Դոնը, սակայն քարտեզի գետը Սև ծով է թափվում Դրիմի թերակղզուց զգալի հեռավորությամբ Հյուսիս-արևմուտքում. աշխարհագրական նմանօրինակ տեղադիրքին քարտեզի վրա համապատասխանում է միայն Դնեպր գետը, որովհետև Դոն գետը Սև ծով է թափվում Դրիմի թերակղզուց ոչ թե Հյուսիս-արևմուտք, այլ Հյուսիս-արևելք:

Զգածիր հայերեն քարտեզի վրա Սև ծովի արևմտյան ափերին մերձակա ցուց է տրված երեք կղզի, որանցից երկուսը կարելի է տեղայնացնել համապատասխանորեն՝ Դանուր գետի գելտայի դիմաց գտնվող ներկայիս Ֆիդոնիսիի և Բոսֆորի նեղուցից արևելք ընկած Քեֆքեն կղզիների հետ: Երրորդ կղզին քարտեզի վրա ցուց է տրված Սև ծովի Հյուսիսում՝ Դնեպրի գետաբերանի ծովախորշում և կարելի է տեղայնացնել ներկայիս Բերեղան կղզու հետ: Այսպիսով փաստերը վկայում են, որ ձվածիր քարտեզի վրա ներկայացված ուսւները բնակությամբ հաստատված էին Դնեպր գետի երկու ափերին, և ցուց տրված «ըռուղք» մակագրությունը վերաբերում է Կիկյան Ռուսիային: Քարտեզագրական պատկերացումները մեզ հանգեցնում են նաև այն եղբակացության, որ ձվածիր քարտեզի Դնեպր գետը, որի երկու ափերին տարածված է Կիկյան Ռուսիայի տերիտորիան, ճանաչվել է ժամանակին որպես Եվրոպան Ասիայից բաժանող սահմանագիծ: Հայտնի է, որ Ազովը մերձակեծովյան հին քաղաքներից մեկն է. X դարում այդ քաղաքը գտնվում էր Կիկյան Ռուսիայի պետական սահմանում. XI դարում այդ քաղաքը, ինչպես նաև Ռուսաստանի հարավային տափաստանները ընկան ղփչախների (պոլովիների) տիրապետության տակ, որոնց մոտ Ազովը կոչվում էր Ազախ: Հետագայում այդ քաղաքը անցավ այլ տիրակալությունների տակ և կոչվում էր այլ անուններով<sup>4</sup>: Այս փաստը որոշակի կովան է քարտեզը կազմելու ժամանակը որոշելու համար:

Այն պատկերումը, որի համաձայն երկիրը շրջափակված էր բոլոր կողմերից լայն գետ-օվկիանոսով, Արիստոտելի, Եվգորքսի և այլոց տեսությունն էր, որ պաշտպանվում էր մեր թվագրությունից շորս դար առաջ: Սակայն էրատոսթենեսի և Պտղոմեոսի աշխատություններից հետո գիտական աշխարհը այլևս չէր

<sup>4</sup> ԵСԹ, տոմ. I, 1949, ստ. 530.

հետեւմ այդ տեսությանը, հայտնի է, որ դեռ VII դարում հայ հեղինակի կազմած «Աշխարհացոյցը» շարադրել էր երկրի նկարագիրը կոնտինենտալ տեսությամբ։ Սակայն միջին դարերում վանական քարտեզագրությունը վերականգնեց երկիրը ծովով շրջափակված այդ տեսությունը և կիրառվեց այդ շրջանում կազմված վանական համարյա բոլոր քարտեզների համար։

Վանական քարտեզների բանակը ներկայումս գերազանցում է վեց հարյուրը. դրանք կազմված են նույնատիպ և համարյա նույն ժամանակներում։ Այդպիսին է իր բոլոր մանրամասներով նաև XII դարի լատիներեն տեքստով կազմված ձվածիր այն քարտեզը<sup>5</sup>, որ երկրամասերն ու ցամաքները, ծովերն ու օվկիանոսները ներկայացրել է լատիներեն մակագրումների միջոցով։ XII դարի ընդօրինակությամբ մեր օրերը հասած լատիներեն մակագրությամբ աշխարհի ձվածիր վանական քարտեզը կազմված է ճիշտ նույն հիմունքներով և քարտեզագրական մանրամասնությամբ և նույնպես ուղղորդված է արևելքով դեպի վեր, իսկ քարտեզի երկրաչափական կենտրոնում խոշոր շրջանագծի ներսում ներփակված է Երուսաղեմ քաղաքը։ Լատիներեն ձվածիր քարտեզը եղերված է լայն գետ-օվկիանոսով, ինչպես որ երկիրը պատկերում էին այդ ժամանակի Այդ քարտեզի վրա պատկերված են ոչ միայն Կովկասը, այլև Հայաստանը և նրա «Հոգենոր» կենտրոնը, սակայն այն տարրերությամբ, որ Հռոմ և Պոլիս քաղաքները բացի պայմանական նշաններից, մակագրված ունեն նաև անունները. սակայն հայերի «Հոգենոր» կենտրոնը ներկայացված է միայն պայմանական նշանի օգնությամբ, քաղաքի անվան մակագրությունը բացակայում է։

Լատիներեն մակագրությամբ վանական քարտեզի կենտրոնում ներկայացված Երուսաղեմը հայերեն քարտեզի համեմատությամբ փոքր տարածություն է գրավել, չնայած որ այդ երկու քարտեզները համարյա միևնույն մասշտարի պատկերումներ են. հայերեն ձվածիր քարտեզի վրա Երուսաղեմը, բացի թաղամասերից, ներկայացված է այլ մանրամասների բավական մեծ բեռնըվածքով՝ բացատրական մակագրումների միջոցով։

Հայերեն ձվածիր քարտեզի մանրամասների տեղադիրքերից, բնակավայրերից, ինչպես նաև արաբական շրջանի քարտեզագրական հատկանիշներից ու մակագրումներից աներկբայորեն հետեւում է, որ այն կազմված է XI—XII դարերում և արևելքին

<sup>5</sup> British Museum, Add. Ms 28681.

քաջատեղյակ հեղինակի կողմից։ Քարտեղի ներկայացրած  
աշխարհագրական մանրամասների տեղադրությունը մաթեմատի-  
կական ճշտությամբ չի տրված, բացակայում են ոչ միայն աշխար-  
հագրական ցանցի տարրերը, այլև չեն պահպանված այդ ման-



Նկ. 3. Լատիներեն մակագրությամբ վանական քարտեղը։

բամասների և զրագծերը։ Հայերեն ձվածիր աշխարհի քարտեզը կազմված չէ որևէ պրոյեկցիայի հիմունքներով։ այդ քարտեզը չունի միջօրեականների ու զուգահեռականների ցանց։ Աշխարհագրական բոլոր մանրամասները արված են համեմատական տեղադրիբով, իսկ մակագրությունների տերիտորիան միշտ չէ, որ համատեղում է տվյալ մանրամասի իսկական տեղադրիբի հետ։ Այդ կապակցությամբ կարող է սխալ պատճենաբանություն ստացվել, թե քարտեզի «ըսուլք» մակագրությամբ նշված մակերեսը ոչ թե կիսյան Ծուսիայի տերիտորիայի տեղադրիբին է համապատասխանում, այլ կենարոնական Ծուսաստանի հարավյային տափաստաններին։ Սակայն, ինչպես հայտնի է պատմությունից, XI դարի վերջերից Ծուսաստանի հարավյային այդ սահմանները գրավված էին արգեն գվշախների հորդաների կողմից և միշտ՝ 1480 թվականին է հաջողվել վերականգնել ոռու ժողովրդի պետական իշխանությունը Մոսկվայի գլխավորությամբ, Ծուսաստանի կենարոնական տերիտորիայի սահմանահատվածում։ Ինչանակի հայերեն ձվածիր աշխարհի քարտեզի վրա «ըսուլք» մակագրությամբ ընդգրկված տերիտորիան, աշխարհագրական տեղադրությամբ համապատասխանում է Դնեպր գետի աջ և ձախ ափերին, այսինքն՝ այն մակերեսին, որ պատկանել է Կիևյան Ծուսիային և գոյություն է ունեցել մինչև XI դարի վերջերը։ Տերիտորիայի համանման սխալ պարզաբանում է արված նաև մինչև վերջերս թուրք հեղինակի վերագրված, սակայն իրականում արար քարտեզագիտների կազմած շրջանատեսք աշխարհի քարտեզին։ Այդ քարտեզում Կասպից լճից դեպի Հյուսիս-արևելք առկա է «ոռու» մակագրությունը, որը երկար ժամանակ ուսումնասիրողների կողմից ընդունված է եղել որպես ոռու ժողովրդին պատկանող տերիտորիա։ սակայն քարտեզը կազմված լինելով արարական տիրապետության շրջանում, հասկանալի է, որ նրա հեղինակները այդ մակագրությամբ նկատի են ունեցել միայն Կիևյան Ծուսիան։ Այդ քացարությունը ճիշտ է հետևյալ նկատառումներով։ արար գրող իրն-Խորդաբեհի հաղորդման համաձայն, IX դարում սլավոնական ցեղերից (Կիևյան Ծուսիա) նավարկում էին Կերչի նեղուցով դեպի Ազովի ծով, ապա Դոն գետով դեպի վեր բարձրանում մինչև Վոլգա։ Դրանից հետո, Վոլգա գետով նրանք իջնում էին և Կասպից ծովով ու ցամաքով հասնում Բաղդադ։ Առևտրական այս փոխադարձ հարաբերություններն են հիմք ծառայել, որ արևելքի ժողովրդի կողմից կազմված աշխարհի

քարտեղի վրա տեղ է գտել նաև «ըռուզք» ժողովրդի տերիտորիան։ Սակայն պետք է նկատել, որ փաստերը լրջախոհ չուսումնասիրելու հետևանքով, աշխարհի այդ քարտեղը ոմանք ընդունել են որպես բնագիր և համարել այն ընդօրինակման ժամանակաշրջան՝ XIV դարի արգասիք։

Ուսումնասիրելով միջնադարի ձկածիր հայերեն քարտեղը, աշխարհագրագետ Հ. Հովհաննիսյանը հայացքների որոշակի ընդհանրություն է փնտել VII դարի «Աշխարհացոյց»-ի երկրի ձեփի վերաբերյալ շարադրանքում ու հանգել եզրակացության, որ «Երակացուց մի քանի գլխով ցածր են կանգնած նրանից հետո հանդես եկած միջնադարյան հայ աշխարհագրագետները»։ Ընդհանուր առմամբ, այս ճշմարիտ միտքը փաստերով լուսաբանելիս հեղինակը հանգել է սակայն, հակառակ եզրակացության։ Նա գտել է, որ «Միջնադարի աշխարհագրագետների մի մասը հաստատում է, որ երկինքը անշարժ է և ծառայում է երկրի համար որպես առաստաղ»<sup>7</sup>։

Տիեզերագիտական աշխատություններում Անանիա Շիրակացին հարել է մեր թվագրության երկրորդ դարի ականավոր հույն գիտնական Պտղոմեոսի աշխարհայացքին։ Երկրակենտրոն այդ տեսության համաձայն ընդունված է, որ երկիրը գտնվում է անշարժ վիճակում և երկնային մարմինների տեղաշարժը բացատրվում է երկնքի շրջապտույտով։ Երկրակենտրոն այդ տեսությունը տիրող էր մինչև XVI դարը, երբ լեռ գիտնական Կոպենիկոսը առաջարկեց դրան հակառակ արեգակնակենտրոն նոր տեսությունը։ Կնշանակի Հովհաննիսյանի ներկա պնդումը, թե միջնադարի աշխարհագրագետների կարծիքով, «երկինքն է անշարժ ու երկրի համար ծառայում է որպես առաստաղ», ոչ ճիշտ ապացուց է, որովհետև ստացվում է, որ միջնադարի գիտնականներն ըստ ամենայնի ընդունել են երկրի պտույտը իր առանցքի շուրջը։ ուստի այդ եզրահանգումով միջնադարի աշխարհագրագետների գիտական մակարդակը «մեկ գլխով ցածր» համարել չէր կարելի։

Բացի այդ, միջնադարի հայ քարտեղն ուսումնասիրելիս, նեղ մասնագիտական խնդիրներում վկայակուվել են միջնադարի ականավոր հայ բանաստեղծների գործերը։ Երկրի ձեփի պարզաբանման

<sup>6</sup> Հ. Հովհաննիսյան, Աշխարհի հայկական ձեռագիր քարտեղը, Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հատ. 43, աշխարհագրական սերիա, պրակ 1, Երևան 1954, էջ 90.

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 82։

նաղատակով դիմել են այդ ժամանակի Հայ րանաստեղծ Ներսես Շնորհալու «Յաղագս երկնի և զարդոց նորա»<sup>8</sup> աշխատությանը։ Այս հարցում անտեսված է այն պարզ իրողությունը, որ միշնագարի րանաստեղծական զեղումները չպետք է ընկալել որպես գիտական տեսության արգասիք կամ միջոց որևէ տեսության հիմնավորման համար։

Հայերեն ձևածիր տեսքի աշխարհի քարտեղի վրա նշանակված են քաղաքներ և այլ մանրամասներ, որոնց առկայությունը կարող է որոշակի հիմք ծառայել քարտեղը կազմելու ժամանակը որոշ շելու համար։ Այսպես, արևելքի ամենահարուստ քաղաքներից էր Բաղդադը, որ 1258 թվականին ընկալվ մոնղոլների տիրապետության տակ, կորցրեց երբեմնի նշանակությունը, թուլացավ և ապրեց անկում։ Այդ քաղաքը XIII—XIV դարերում Հուկավյանների իշխանության մի բաժնեկալվածքի գլխավոր քաղաքներից մեկն էր դարձել, որ դժվար թե արժանանար ներկայացվելու աշխարհի քարտեղի վրա։ պետք է ենթադրել, որ այդ քարտեղը կազմված է այն միջոցին, երբ Բաղդադը գեռ որոշակի դեր է խաղացել միջազգային հարաբերությունների մեջ, որովհետև «Զինդիդ խանի գործադրած եղանակների հետևանքով», մի քանի տասնամյակների ընթացքում Բաղդադն ու Կիսր, Խորեզմն ու այն ժամանակի քաղաքականության խոշոր այլ օշախները արդեն փլատակներ էին դարձել, իսկ ծաղկող այգիները՝ ոչնչացվելու<sup>9</sup>։ Հայտնի է նաև այն ժամանակի հարամանը, որի համաձայն կարգադրված էր գործող բանակին բազմաթիվ քաղաքներ «ամրողապես քարուքանդ անել և նրանց տեղը գարի ցանել»<sup>11</sup>։

Քննարկվելիք հարցի պարզաբանման համար որոշակի նշանակություն ունի ձևածիր հայերեն ձեռագիր քարտեղի Հապաշմակագրությունը. այդ անունը մեկնաբանվում է միայն արաբական տառադարձությամբ և նշանակում է խառն ժողովուրդ՝ մետիս. այդ երկրի համար օգտագործված հունարեն Այնթիոպարան է վերածվել էֆիոպիայի, իսկ երբեմնի գործածական Արիսինիա անունը նվաստացուցիլ նշանակություն ունի և տրված է նրան գաղութակալական շրջանում։ Կնշանակի Հապաշմակագրությունն ևս լուրջ կովան է քարտեղը կազմելու ժամանակամիջոցը պարզելու համար։

<sup>8</sup> «Գիրք, որ կոչվ Ցիսուորդի», Պոլիս, 1824, էջ 312։

<sup>9</sup> Հ. Հավանենիսյան, նույն տեղում, էջ 82։

<sup>10</sup> Всемирная История, том III, М., 1957, стр. 519.

<sup>11</sup> Тизенгаузен, Сборник материалов, том II, 1941, стр. 155.


Երուսաղեմը քարտեղագրության համար խոշոր նշանակություն ստացավ խաչակիրների արշավանքների ժամանակ, երբ այն հանդիսանում էր համանուն կայսրության մայրաքաղաք։ Սակայն XII դարի երկրորդ կեսից նա կորցրեց իր նշանակությունը և սելջուկների ներխուժմամբ ու խաչակիրների պարտությամբ ընկավ եղիպտական սուլթանի տիրապետության տակ։ Երուսաղեմ քաղաքի քարտեղագրական այն գերազնահատանքը, որին նա արժանացել է, տեղադրվելով աշխարհի քարտեղի կենտրոնում, անջատ թաղամասերով, բնակիչների դասային տեղաբաշխումով և այլ մանրամասների դրսնորումով, հնարավոր էր միայն խաչակրաց արշավանքների շրջանում, երբ այն հիմք էր ծառայում վանական քարտեղների ընդօրինակության և փոխառության համար։ Հետաքրքրական է, որ վանական ձվածիր քարտեղի կենտրոնում պատկերված երուսաղեմ քաղաքի հատակագիծը նույնպիսի մանրամասնությամբ է տրված նաև Մաշտոցի անվան Մատենադարանի մի այլ ձեռագրում<sup>12</sup>:

Այդ երկու քարտեղների վրա, որոնք կազմված են միմյանցից անկախ, տարրեր անձնավորությունների կողմից և ուղղորդված են արևելքով դեպի վեր, հյուսիս-արևմտյան արվարձանում զետեղված է «ողուն պրոպատիկ», որը ներկայացրել է անդամալույծներ առողջացնող առասպելական ավաղանը։ Քաղաքի հարավարևմուտքի արվարձանում է Սելովմայի աղբյուրը, որի ջուրը դառն լինելու պատճառով չի օգտագործվում և այլն։ Երուսաղեմի հատակագիծը այդ երկու քարտեղների վրա, ինչպես արտաքին տեսքով, նույնպես և բովանդակությամբ կատարելապես նման է միմյանց։ Այդ բոլորը այն համոզմանն են հանգեցնում, որ երուսաղեմը հիշյալ երկու տեխստերում պատկերվել է նույն ժամանակներում և միևնույն պայմաններում։

Հատակագիծի կենտրոնական շրջագծի ներսը նշանակված է թագավորների ու քահանաների համար որպես բնակության վայր։ Կենտրոնից դուրս, երկրորդ առավել մեծ շրջանագծի արտաքին տարածությունը առանձնացված է «իշխանների ու մեծատունների» բնակության համար։ Այս մանրամասնությունը որոշակի ժամանակի արգասիք է։ Երուսաղեմը ծառայել է թագավորների, նրա իշխանների ու մեծատունների համար որպես բնակության վայր խաչակրաց արշավանքների ընթացքում միայն, երուսաղեմի թա-

<sup>12</sup> Մատենադարանի 1770 համարի տակ է գտնվում Աստվածատուր գրչի 1583 թվի ձեռագիրը։

գավորության օրոք, երբ նա վերիշխում էր, տարածելով զեկավառությունը երեք վասար պետությունների՝ Անտոռի իշխանության, Տրիպոլիի և Եղեսիայի կոմսությունների վրա Երուսաղեմի այդ թագավորությունը, ինչպես հայտնի է, ստեղծվեց 1099 թվականին,



Նկ. 4. Երուսաղեմ քաղաքի հատակագիծը

իսկ անկումը տեղի ունեցավ XII դարի վերջերին՝ 1187 թվին, երբ Եղիպտոսի սուլթան Սալահ-էդ-դինը հաղթեց խաչակրաց ասպետների զորքին ու գրավեց նաև Երուսաղեմը։ Մեր կարծիքով, Հայերեն ձվածիր քարտեզը կազմված է այդ ժամանակամիջոցում։

Հայերեն ձվածիր քարտեզը խաչակրաց ժամանակաշրջանի արգասիք է. այն պատրաստված է հայ հեղինակի կողմից և օգտագործված են արևելքում գոյություն ունեցող տեղագրական

քարտեզների մանրամասների բնագրերը, ըստ որում, կատարված են այնպիսի լրացումներ, որոնք անհրաժեշտ են նկատվել և բովանդակությամբ, և մանրամասնությամբ, և այդ քարտեզի վրայից, ըստ երկույթին, դուրս են ձգված բոլոր այն մանրամասները, որոնք չեն առնչվել հիմնական նպատակներին: Հավանական է նաև, որ բնագրից ընդորինակված ներկա քարտեզը ենթարկվել է զգալի ընդհանրացման, նրա մասշտաբը փոքրացնելու կապակցությամբ<sup>13</sup>:

Եթե հայ հեղինակը այդ քարտեզը կազմած շիներ խաչակրաց արշավանքների ժամանակներում Հայաստանից հեռու, ապա նրա վրա չէր կարող տեղ շտոնել գոնե մեկ քաղաք Հայաստանից և կամ այլ առանձնահատուկ որևէ մանրամասն: Ներկա աշխատությունը հենված է քարտեզագրական այն ավանդույթի վրա, որ այլ ազգերի հեղինակները միշտ նշել են իրենց գլխավոր քաղաքները կամ որևէ առանձնահատուկ նշանակությամբ հատուկ բնակավայրերն ու մանրամասները, որոնք, սակայն հատուկ չեն եղել վանական քարտեզների բովանդակությանը: Պետք է նկատել, որ ձվածիր քարտեզի բեռնվածքը շատ նոսր է, հետևապես նոր, լրացուցիչ մանրամասնի տեղադրումը ոչ մի գժվարություն չէր ներկայացնի:

Հայերեն ձվածիր քարտեզի հյուսիս-արևելյան հատվածի «Սարա» մակագրությունը շպետք է շփոթել Ոսկե հորդայի Սարայ մայրաքաղաքներից որևէ մեկի հետ: Սարա թերևս կղզի է, որ գտնվել է Կասպիական ծովում, արևմտյան ափին մերձակա: Համենայն դեպս, Սարան չի կարելի ընդունել մոնղոլական մայրաքաղաքներ՝ Սարայ-Բաթու կամ Բերքե: Հայերեն ձվածիր տեսքի քարտեզը XIII կամ XIV դարերում կազմված լինելու գեպքում նրա վրա անպատճառ տեղ կդանեին Ոսկյա հորդայի այդ գլխավոր երկու քաղաքները՝ Սարայ-Բաթուն և Սարայ-Բերքեն: Սակայն քարտեզի տեղանունների ճնշող մասը վերաբերում է արաբական շրջանին: Հայտնի է, որ Սարայ-Բաթու մայրաքաղաքը կառուցված է XIII դարի քառասունական թվականներին, իսկ Սարայ-Բերքեն կառուցված է 1257—1266 թվականներին, և նրա բնակչների թիվը հասել է շուրջ հարյուր հազարի, սակայն 1395

<sup>13</sup> Այդ քարտեզը ձվածիր է, որովհետև նրա բեկուային առանցքը կարճ է հասարակածնայինց: Ուստի սխալ է այն կարծիքը, որ «Աշխարհի հայկական ձեռագիր քարտեզի» հեղինակը երկրի ձերին վերաբերող իր աշխարհայացքով կանգնած է եղել սկավորակաձևության տեսակետի վրա:

թվին Թեմուրը այն ավերեց, որով և սկսվեց Ոսկե Հորդայի անկումը: Զվածիր տեսքի բարտեղի վրա Ոսկե Հորդայի այդ երկու մայրաքաղաքները չեն նշանակված, ուստի այն կազմված է այդ քաղաքների հիմնադրումից առաջ, ուսկայն ոչ նրանց ավերումից հետո:

Զվածիր բարտեղի վրա Խորեգմից արևելք նշանակված են երկու բնակավայրեր՝ Զայթուն և Խայթայք: Ա. Եֆիմովը հիշեցրել է, որ IX դարում Զինաստանում գոյություն ունեին արարական գաղթավայրեր՝ Խայթայք և Զայթուն<sup>14</sup> (Զժու-Ճոռու-Փու), որոնք արարական խալիֆայության անկումով և մոնղոլական Հորդաների ներխուժումով իսպառ վերացվել էին. այդ տեսակետից ձվածիր բարտեղի այդ երկու քաղաքները որոշակիորեն մատնանշում են նրա կազմելու ճշգրիտ ժամանակը. այդ նշանակում է, որ ձվածիր տեսքի բարտեղը չէր կարող կազմված լինել XII դարից հետո:

Հայերեն ձվածիր բարտեղի Մերդին բաղաբը ևս վկայում է, որ այն պետք է կազմված լինի XII դարից ոչ ուշ. Հայտնի է, որ Երուսաղեմի կոստակալ Արտուրը 1096 թվականին իր գերիշխանության տակ էր ներգրավել Մերդինը, որի գոյության ամենանշանակալից ու ծաղկուն ժամանակաշրջանն էր այդ: Հետագայում, XIII դարում Մերդինը գրավում են նախ եգիպտացիներ, իսկ հետո՝ մոնղոլական Հորդաները, և երկար ժամանակ այդ բաղաբը կորցնում է իր նշանակությունը:

Հայերեն ձվածիր բարտեղի վրա նշանակված Խորեգմը XII դարի սկզբներում հասել էր ամենաբարզավաճ վիճակի. այդ ժամանակներում այնտեղ աշխատել ու գործել են ականավոր գիտնական ալ-Բիրունին և բժիշկ, փիլիսոփա Ավիցենան: Սակայն մոնղոլների ներխուժումով Խորեգմի պետությունը տապալվեց, երկիրը դարձավ Ոսկե Հորդայի խանության անանուն մի գավառ. Երկիրը բաժանվեց Ոսկե և Սպիտակ Հորդաների՝ Զաթայի խանության և Իրանի՝ Իլխանի թագավորության: Խորեգմը այդ ժամանակ չէր կարող տեղ գտնել բարտեղների վրա: Ճիշտ է, XIV դարի երկրորդ կեսից Խորեգմը ձեռք բերեց ինքնուրույնություն, սակայն շատ կարճ ժամանակով, որովհետև դրան անմիջապես հաջորդեց թուրքերի տիրակալությունը: Ինչպես Հայտնի է, «մոնղոլական Հորդաները Խորեգմը գրավեցին 1219 թվականին. բնիկ ժողո-

<sup>14</sup> Атлас географических открытий в XVII—XVIII веках, под редакцией А. Ефимова, М., 1964, стр. 9.

վըրդին ենթարկեցին տանջալից մահվան, իսկ շենքերը հիմնովին քարուգանդ արեցին»: Հետագայում «Թիմուրը 1391 թվին մարդիկ ուղարկեց, որպեսզի Խորեզմը վերականգնեն և կուլտուրական տևաքի բերեն<sup>15</sup>»: Պատմական այս փաստերը վճռական կովան են ծառայում, որ Հայկական ձվածիր քարտեզը կարող էր կազմված լինել XII դարի վերջերին<sup>16</sup>:

Ձվածիր քարտեզի վրա նշանակված է Ղրիմի թերակղզու քաղաքներից նաև Կաֆան. քարտեզն ուսումնասիրողը ենթադրել է, որ այդ անոնք առաջացել է մոնղոլների տիրապետության հաստատումից հետո միայն, և այդ կապակցությամբ եղրակացրել, որ քարտեզը կազմված է XIV դարում: Սակայն այդ ենթադրությունը չի խարսխված փաստերի վրա. գրավոր աղբյուրները ժըխտում են այդ ենթադրությունը. փաստերը հաստատում են, որ մոնղոլները Թեոդոսիա քաղաքի անոնք ոչ թե փոխարինել են նորով, այլ պարզապես վերականգնել են նախկինում գործածության մեջ եղած նրա հին անոնք: Կոստանդին Միրանածինի (Է-Պերփյուրուգենի 912—959) «De administrando imperio» աշխատության մեջ հաստատվում է, որ դեռ X դարում Կաֆա անոնք գործածության մեջ է եղել<sup>17</sup>: Պատմաբան Քուշներյանը «Պատմութիւն գաղթականութեան Խրիմու Հայոց» աշխատության մեջ, որ հրատարակված է Վենետիկում 1895 թվին, նույնպես հաստատում է, որ «Հայք Ժ դարէ սկսեալ տարիական թերակղզոյն մեջ բնակութիւն հաստատել են. ճիշդ Ժ դարուն մեջ առաջին անգամ կը լսուի ի պատութեան Կասա (Capha) անոնք: Հնախոսից ամենայն ջանք ի գուր ելած են, այս անուան ծագման կամ ստուգաբանության մասին» (էջ 112): Այդ նշանակում է, որ Թեոդոսիա քաղաքի Կաֆա անոնք մոնղոլական ժամանակաշրջանի ծնունդ չէ, հետեւապես սխալ մեկնաբանության վրա հիմնված՝ քարտեզ կազմելու ժամանակը (XIV դար) չի համապատասխանում իրականությանը: Կաֆա անոնք, ինչպես վկայում են պատմաբանները, գոյություն է ունեցել սկսած X դարից, ուստի

<sup>15</sup> Տիզենգայզեն, նույն տեղում, էջ 14 և 155:

<sup>16</sup> Սիսակլում է «Աշխարհի Հայկական ձեռագիր քարտեզ»-ի հոդվածագիրը (Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», Հատ. 43, էջ 85), երբ քարտեզի վրա մակագրված Խորեզմի պետությունը տեղայնացնում է որպես Խիլա քաղաք: Այդ քաղաքը քարտեզի վրա կարող էր տեղադրվել XVI դարում միայն:

<sup>17</sup> Կարծիք է Հայտնվում, որ այդ չափու անոնք հիշատակել է դեռ Ստրաբոնը 312 գլխում (Վարտօնյան, տոմ III, 1965, ստ. 453):

ու մի հիմք չկա այդ անվան կապակցությամբ հաստատել, որ քարտեզը կազմված է XIV դարում։ Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև այն հարցը, թե որտեղ է կազմվել քարտեզը։

Խաչակրաց արշավանքների ընթացքում Կիլիկիան հանդիսացել է մի տեսակի հանգրվան, որտեղից խաչակիրները անցել են Խաչակիրները շարժվեցին Կիլիկիայի վրայով Ռուբինյան թագավորության սկզբնավորման համարյա առաջին տարիներին, երբ հայ ժողովուրդը, ազատագրված սելջուկյան հորդաներից, հավաքվել էր երկրի բոլոր ծայրամասերից ու ստեղծել Կիլիկիայի հայկական թագավորությունը։ անհավանական շպետք է համարել, որ հայերն ձվածիր քարտեզը վերախմբագրվել է տեղական քարտեզների հիման վրա՝ ընդօրինակվել արևելքի ժամանակակից թերեւ արարական և այլ քարտեզների աշխարհագրական մանրամասների օգտագործումով։

Հայ ժողովրդի կենտրոնացումը Կիլիկիայում և անկախ պետականության կազմավորումը XI դարում նպաստավոր պայմաններ ստեղծեցին Կիլիկիայում հայ կուլտուրայի զարգացման համար։ Այդ շրջանում ստեղծվեցին զպրոցներ, գրադարաններ ու կուլտուրական այլ օջախներ Տարսոն, Սիս և այլ խոշոր քաղաքներում, ինչպես նաև Կարմիր վանքի և այլ խոշոր մենաստաններում։ Առանձնակի հոգատարությամբ են հավաքվել ու ընդօրինակվել հայ ձեռագրերը, և ստեղծվել զրական և գիտական գործեր՝ Վարդան Այգեկցու առակները, Ռարունու, Հեթումի և այլոց գործերը։ Կիլիկիայում ստեղծվեց ինչպես ինքնուրուցին, այնպես էլ Հոնարենից, լատիներենից, արաբերենից և ուրիշ լեզուներից թարգմանվող զրականություն՝ Միխթար Հերացու, Ներսես Լամբրոնացու, Հովհաննես Երզնկացու միջոցով։ Կուլտուրայի զարգացման նմանօրինակ պայմաններում և Թորոս Ռոսլինի ստեղծած մանրանկարչության այդ միջավայրում ոչինչ շպետք է արգելը հանդիսանար այդպիսի մի քարտեզի գործնական պահանջին ու նրա կազմվելուն։ «Եփրատ գետի եղերքից մինչև Կիլիկիա «կտիրէին և կապրէին հայերը. երկիրը բազմաբնակիլ էր, վանքերով ու քահանաներով, տունէրով առատ։ Անոնց կարգին կար վանքեր բազմամարդ գյուղերով, գյուղակներով ու դաշտերով<sup>18»</sup>, գրել են այդ ժամանակի մասին։

<sup>18</sup> «Առաջին և երկրորդ խաչակրությունները ըստ Սուրիայի անանուն ժամանակագրի մը», թարգմանեց Յ. Բրուտյան, Թեյրութ, 1965.

Զեռագրերից մեկում, ուր և զետեղված է Երուսաղեմի քարտեղը, աշխարհի բոլոր երկրները ներկայացված են նաև քարտեղագրական սիմվոլիկ եղանակով<sup>19</sup>: Աշխարհագրական այդ քարտեղը, որ տրված է մարդու ամբողջական նկարի վրա, այնպես է պատկերված, որ մարդու մարմնի յուրաքանչյուր մասը, մակագրումների միջոցով ներկայացնում է որոշակի երկրամաս կամ պետություն: Այդ ձեռագիր քարտեղի վրա ներկայացված մարդու գլուխը պատկերել է Պարսկաստանը՝ եղան սիմվոլիկ գծագրով, սիրտը Ասիան է ներկայացնում՝ առյուծի սիմվոլիկ նկարով, արևահյուսվածքը՝ Էլադան, սրունքները Հնդկաստանն է ձկան պատկերագրումով, Մեծ Հայքը պատկերված է սրտի աջ կողմում, զատիկի սիմվոլիկ կենդանու նկարով, Հետաքրքրական է, որ աշխարհագրական քարտեղը պատկերող մարդու ստամբուր, որ ընդգրկել է կենտրոնական լայն տարածությունը, Հատկացվել է Կիլիկիային, ըստ ամենայնի ընդգծելով Կիլիկիայի կենտրոնական դերը այլ երկրների նկատմամբ և նրա նշանակությունը որոշակի ժամանակաշրջացքի համար: Բացի մակագրումներից, այդ քարտեղի վրա միևնույն գույնի տարրեր երանգներով կարողացել են անջատել և սահմանագծել երկրները միմյանցից և այդ գույնի ընդհանուր ֆոնի վրա վերը տրված գաղափարապատկերներով ըստ երևույթին ներկայացրել են տվյալ երկրի որոշակի առանձնահատկությունները: Այսպես՝ Կիլիկիայի տերիտորիայի վրա պատկերված է ձեռքի կշեռք, որի նժարները օդի մեջ գտնվում են հավասարակշիռ վիճակում, ըստ երևույթին, որպես արդարության օրրան:

Համեմատելով ձեռագրերի աշխարհի ձվածիր հայերեն քարտեղի Երուսաղեմ քաղաքի հատակագծերը միմյանց հետ, հաստատվում է, որ դրանք ընդօրինակություններ են միևնույն բնագրից և կազմված են եղել Կիլիկիայում: Նշանակալից է, որ ուսումնասիրելով միջնադարի հայ ձվածիր քարտեղը, այն եղացությանն են հանգել, որ այդ ձեռագիր քարտեղի բոլոր մակագրումների տառերի տեսակները յուրահատուկ են Կիլիկիայի գրչության դպրոցներին<sup>20</sup>: Կնշանակի ոչ միայն քարտեղը, այլև նրա ընդօրինակումը կատարված է Կիլիկիայում:

Ձվածիր հայերեն քարտեղն ուսումնասիրելիս հայտնաբերված է նաև, որ «XIII դարի հայ մատենագիր աշխարհագիրներից

<sup>19</sup> Մաշտոցի անվան Մատենադարանի 1770 համարի ձեռագրի 373 էլք:

<sup>20</sup>Տե՛ս Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 91:

նշանավոր Հովհաննես Երզնկացին, կամ ինչպես տառմ են Հովհաննես Սործորեցին, որին տվել են նաև Պլուղ մականոնը, օգտվել է Անանիա Շիրակացու աշխատություններից»: Մատենագրական այս կարևոր հայտնագործումը, անկախ ձվածիր քարտեզի



Նկ. 5. Մարդ քարտեզ

հանգամանալից բննարկումից, խոշոր նշանակություն կունենար VII դարի «Աշխարհացոյց»-ի և նրա հետ կապված այլ հարցերի համար, եթե խսկալես համապատասխաներ առկա փաստերին: Անցյալում «Աշխարհացոյց»-ի հեղինակի հարցի վերաբերյալ

բազմաթիվ ուսումնասիրություններ են լույս տեսել, ինչպես հայ, նույնպես և օտար գիտականների կողմից, և եթե Երզնկացին VII դարի «Աշխարհացոյց»-ի և նրա հեղինակի մասին որևէ տեղեկություն հաղորդած լիներ իր աշխատություններից որևէ մեկում, ապա այդ հանգամանքը չէր կարող վրիպել ու ժամանակին արձագանք շգտնել գիտական ոլորտներում:

Սակայն Հ. Հովհաննիսյանը պնդում է, որ Երզնկացին ոչ միայն հիշատակել է Անանիա Շիրակացուն, այլև մոտ ծանոթ լինելով նրա աշխատություններին, անգամ կարծիք է հայտնել դրանց վերաբերյալ: Նա գտնում է, որ Երզնկացին «իր մտքերի շարադրմամբ նրանից բավական ետ է մնացել, երկրի ձեփ մասին Շիրակացու հայացքների նկատմամբ կասկածել է»:

Այս շահավետ տեղեկությունը, դժբախտաբար, չի համապատասխանում իրականությանն ու փաստերին: Այն ծանոթագրությունը, որի համաձայն, իրը թե Մաշտոցի անվան Մատենադարանի № 2174 ձեռագրի երրորդ էջում Երզնկացին խոսել և կասկածել է Շիրակացու շարադրած երկրի ձեփ տեսության վերաբերյալ, չի հաստատվում: Մատնանշված ձեռագիրը իրոք Երզնկացու աշխատությունն է, սակայն նրա երրորդ էջը, որ վկայակոչված է, ոչ մի ընդհանուր բան չունի ինչպես Անանիա Շիրակացու, այնպես էլ երկրի ձեփ տեսությանը վերաբերող խնդիրների հետ: Երզնկացու այդ աշխատությունը հոգնոր թեմայով բանաստեղծական գեղումնալից շարադրանք է:

Սակայն Երզնկացին այդ աշխատության 185 էջում ունի քննադատություն՝ Անանիա հայոց վարդապետի, ընդդեմ երկարընակների: Բայց այս Անանիա վարդապետը առնչություն չունի Շիրակացու անձի և նրա արծարծած երկրի ձեփ տեսության հարցերի հետ: Միջնադարի սուրբանավեճերը միաբնակների ու երկարնակների միջև կապ չեն ունեցել երկրի ձեփ տեսության հարցերի հետ, և այդ վկայակոչումն ու մեկնարանումը, ըստ ամենայնի, քննադատությունը հարցին չեն վերաբերվել: Հարկ է նշել, որ Հովհաննես Երզնկացուն, որ Պլուզ մականունն ունի, չի կարելի նույնացնել Սործորեցու հետ. ուսումնասիրությունները հաստատել են, որ նրանք տարբեր անձնավորություններ են: Ներկա բացատրությամբ Ժմանությունը է այն կարծիքը, թե «Աշխարհի հայերեն ձեռագիր քարտեզի հեղինակը երկրի ձեփն վերաբերող իր աշխարհայացքով կանգնած է եղել սկավառակաձևության տեսակետի վրա, որը քիչ թե շատ մոտ է Հովհաննես Երզնկացու

աշխարհայացքին և ըստ այդ աշխարհայացքի կառուցված է նրա քարտեղի հիմքը<sup>21</sup>:

Հայերեն ձվածիր քարտեղը ներկայացրել է նաև Հնդկաստանը, սակայն միմյանցից որոշ հեռավորության վրա երկու առանձին մակարդություններով, առաջինը՝ «աշխարհ հնդկաց», երկրորդը՝ «Հնդկաստան»։ Այդ մակարդություններից բացի, Հընդկաստանի տերիտորիայի վրա զծագրված են աշխարհի բառի իմաստն ունեցող պալեոգրաֆիկ չորս նշաններ, դրանցից բացի, մի բանի տրիշների էլ հետեւը են նշանարկում։ քարտեղի այդ մասը մաշվել, ջնջվել է, ուստի հնարավոր չէ ճշտել այն ժամանակի Հնդկաստանը ներկայացնող աշխարհների ընդհանուր քանակը։ Քարտեղի վրա զծագրությամբ ներկայացված պատմական այդ կարեսը տեղինությունը հաստատում է, որ ձվածիր քարտեղ կազմելու ժամանակ Հնդկաստանը ոչ թե մի ամրողական պետություն է հանդիսացել, այլ բաժանված է եղել առանձին-առանձին ինքնուրույն իշխանությունների, ձվածիր քարտեղի տերմինարանությամբ՝ աշխարհների։

Պատմական աղբյուրներն ու փաստերը վկայում են, որ Հնդկաստանը առանձին-առանձին պետությունների երկիր է եղել XI և XII դարերի ընթացքում<sup>22</sup>։ Արենլիքի թենգալի աշխարհից մինչև նրա արևմուտքի Սինդ աշխարհը, Հնդկաստանը բաժանված է եղել՝ Փալա, Չանդելա, Չոլա, Մալվա, Հաջմիր, Քանահուզ և այլ անշատ ինքնուրույն իշխանությունների՝ աշխարհների։ Հընդկաստանում 1206 թվականից կազմավորվել է, Գազնայից անկախ, այսպես կոչվող, «Դելիի սուլթանությունը», որի գոլությունը շարունակվել է և XIV դարում։ Կնշանակի պատմական աղբյուրների ու փաստերի ուսումնասիրությունը հաստատում է, որ Հնդկաստանը XI և XII դարերի ընթացքում միայն անշատ պետությունների երկիր է եղել, ուստի պետք է եղրահանգել, որ ձվածիր հայերեն քարտեղը կազմվել է XII դարից ոչ ուշ, այսինքն՝ մինչև 1206 թվականը։

Ձվածիր քարտեղն ուսումնասիրողը անտեսել է պատմական այս փաստերը, երբ կարծիք է հայտնել, թե «քարտեղում նշանակված աշխարհ հնդկաց անունը և աշխարհ բառի իմաստն ունեցող պալեոգրաֆիկ նշանները պատկերում են մոնղոլական

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 82։

<sup>22</sup> Всеобщая История, том III (Карта Китая, Кореи, Индии, Японии и сопредельных стран в XI—в первой половине XII в.).

տիրապետության տակ եղած ամենահարավային խանությունը (ուզուաը), որն ընդգրկել է Պարսկաստանը, Աֆղանստանը և Հյուսիսային Հնդկաստանը»: Այդ երկրները XIII դարում, որպես առանձին ինքնուրույն միավորներ գոյություն չունեին, դրանք գտնվում էին իլիսանի մի ընդհանուր խոշոր պետության (ուզուի) մեջ: Հնդկաստանի հյուսիսը մոնղոլական տիրապետության, ուզուսական սիստեմի տակ չի գտնվել, այլ եղել է «Դելիի սուլթանություն» անվամբ անկախ պետություն: Ուսումնասիրողի հիշատակած ժամանակաշրջանում ևս Պարսկաստանը, Աֆղանստանն ու Թելուզատանը ինքնուրույն աշխարհներ չեն եղել, նրանք կազմել են մի խոշոր Սելջուկյան միավետության անբաժան մասը այն տերիտորիայի, որ տարածված էր Կիլիկիայից մինչև Հնդկաստան: Զվածիր քարտեզի հայ հեղինակը շփոթել չէր կարող Աֆղանըստանը կամ Պարսկաստանը Հնդկաստանի հետ: Այնպիսի ենթադրությունները, որ չեն բխում քարտեզի աշխարհագրական տեղաբաշխությունից, չեն դիմանում քննադատության: Սակայն ուսումնասիրողը ցանկացել է ուղղել այդ սխալ ենթադրությունը, վերագրելով դա եվրոպացիներին, որովհետև «Հնդկաստանի մասին որոշակի և ճիշտ տեղեկություններ չունենալու պատճառով, եվրոպացիները սովորաբար Հնդկաստան են անվանել ոչ միայն իսկական Հնդկաստանը, այլև նրան մոտիկ գտնվող երկրները՝ Հարավային Պարսկաստանը, Աֆղանստանն ու Թելուզատանը», սակայն այս ուղղությունը գործին չի օգնում:

Քարտեզի վրա ներկայացված Հնդկաստանը, պատմական բոլոր փաստերի հիման վրա, աներկրայորեն հաստատում է, որ ձվածիր հայերեն քարտեզը կազմված է XI—XII դարերում և քաղաքական, աշխարհագրական իրադրությամբ ոչ ուշ, քան 1206 թվականը:

Ուսումնասիրելով ձվածիր հայերեն մակագրություններով աշխարհի քարտեզը և հաշվի առնելով նրա վրա պատկերված քաղաքների ու աշխարհագրական այլ մանրամասների ժամանակագրական հարցերը, ապա քարտեզ կազմելու հնարավոր միջավայրն ու ժամանակը, մենք հանգել ենք հետեւյալ եղրակացությանը.

1. Աշխարհի հայերեն ձվածիր քարտեզը վանական տիպի այն քարտեզներից է, որոնք լայն տարածում էին ստացել միջինդարերում:

2. Պատմական բոլոր իրադրությունները, ժողովուրդների տեղաբաշխումը, քաղաքների ժամանակագրական տեղեկություն-

ները հաստատում են, որ աշխարհի հայերեն ձվածիր քարտեզը կազմված է XII դարում Կիլիկիայում, խաչակրաց արշավանքների ժամանակաշրջանում:

3. Սխալվում են այն ուսումնասիրովները, որոնք եղրակացրել են, թե հայերեն միջնադարի ձվածիր քարտեզի հեղինակը կանգնած է երկրի սկավառակածնության տեսակետի վրա:

4. Այն պնդումը, թե «Քարտեզներից ամենահինը միջնադարում կազմված աշխարհի շրջանաձև քարտեզն է», սխալ է. VII դարի «Աշխարհացոյցը» միջնադարում է կազմված և ձվածիր քարտեզից առավել հին է:

5. Քարտեզագրության պատմությանը հայտնի չեն «Հայկական տիպի» քարտեզներ, այն պնդումը, թե աշխարհի ձվածիր քարտեզը «տիպիկ հայկական քարտեզ է», անշուշտ, իրականությանը չի համապատասխանում: Քարտեզագրության այդ ժամանակաշրջանի պատմությանը հայտնի են որպես տիպիկ քարտեզներ՝ հոռմեականը, արարականն ու վանականը:

М. М. ХАЧАТРЯН

## СРЕДНЕВЕКОВАЯ ЭЛЛИПТИЧЕСКАЯ КАРТА МИРА НА АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

### Резюме

В одной из рукописей Матенадарана имени Маштоца имеется эллиптическая карта мира, составленная в средние века на армянском языке. На ней географические сведения и картографические подробности обитаемой части Земли представлены исключительно при помощи надписей. Карта мира, по традиционным представлениям того времени, окаймлена широкой рекой-океаном, а в центре карты, в черте круга с весьма большим радиусом, изображен подробный план города Иерусалима. По сравнению с картой, Иерусалим представлен многократно увеличенном масштабе и по площади занимает почти шестую часть территории обитаемой Земли.

Карта мира разделена на две полуокружности. Первая половина с изображением Азии ориентирована вверх, вместо севера. Отрезок прямой, разделяющий карту мира на две полуокружности, изображает реку Днепр, по берегам которой, как утверждает надпись, размещены «русские». Нижняя

полуокружность карты разделена Средиземным морем на две части: левая часть отведена Европе, правая—Африке; Азию от Африки отделяет Нил.

На карте, как и в самом манускрипте, не даны сведения об авторе и времени составления карты. Наши исследования картографических подробностей и плана города Иерусалима выявили время и место составления армянской эллиптической карты. Сопоставление ее с аналогичными средневековыми картами приводит к заключению, что армянская карта мира и по форме изображения, и по содержанию идентична так называемым монастырским картам.

На основе детального изучения подробностей, относящихся к городам, наименованиям и пр., установлено, что армянская карта мира составлена на территории Киликии, в первые же годы образования Киликийского армянского государства.

На это указывают надписи и чертежи манускрипта, план города Иерусалима, а также символический чертеж «Человек—карта». Известно, что в средние века Европа не располагала такими подробными крупномасштабными картами для Ближнего Востока.

По мнению некоторых исследователей, эллиптическая карта мира была составлена в конце XIII века. Эта версия основывается на том, что на карте наименование Кафа для города Феодосии якобы дали монголы после того, как они обосновались на Крымском полуострове. Такое заключение не вытекает из имеющихся фактов. Наименование Кафа было дано не монголами, а армянами—беженцами в X веке, когда они поселились в Крыму. Монголы могли лишь восстановить старое наименование города. По-видимому, это название, установленное армянами, не было окончательно привито, и часть населения фактически продолжало употреблять его старое, римское наименование.

Заключение автора подтверждается также авторами по истории Крыма.